



«ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ»

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Taxpayers Rights Protection» Public Organization

ք. Երևան, 05.02.16 թ.
Ելք № 009

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտնում ենք Ձեզ, որ 2016 թվականի հունվարի 1-ից հաշվարկային փաստաթղթերը բացառապես էլեկտրոնային եղանակով դուրսգրելու օրենսդրական պահանջը բազմաթիվ հարցադրումներ է առաջացնում հարկ վճարողների շրջանում, որոնց որոշ մասի կիրառության վերաբերյալ պարզաբանումներ ներկայացվել են, իսկ որոշ հարցադրումների մասով մոտեցումներն անորոշ են:

Այդ կապակցությամբ կից Ձեզ է ներկայացվում հարկ վճարողի գրությունը և խնդրում ենք պարզաբանել բարձրացված հարցերին:

Առդիր՝ 2 թերթ:

Հարգանքով՝

Հ/Կ նախագահ

Փ. Թադևոսյան

Առողջապահության ոլորտում բնակչությանը բժշկական ծառայություններ մատուցող, հարկման ընդհանուր դաշտում գործող կազմակերպությունը ապահովագրական ընկերության հետ կնքած համագործակցության պայմանագրի հիման վրա բժշկական ծառայություններ է մատուցում ապահովագրական ընկերության կողմից ապահովագրված՝ բժշկական ծառայություններ ստանալու իրավունք ունեցող ֆիզիկական անձանց :

Կազմակերպության կողմից հասույթը ճանաչվում է հաշվեգրման սկզբունքով՝ ծառայության մատուցման պահին, ներքին հաշվառման փաստաթղթերի հիման վրա:

Ապահովագրված անձանց մատուցված բժշկական ծառայությունների վերաբերյալ կազմակերպությունը ապահովագրական ընկերությանն է ներկայացնում բոլոր անհրաժեշտ տեղեկությունները և փաստաթղթերը՝ (Եպիկրիզ , քաղվածք ամբուլատոր-բժշկական քարտից, հետազոտությունների պատասխանների պատճենները և այլն) պայմանագրով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Այնուհետև, ապահովագրական ընկերությանը ներկայացվում է որոշակի ժամանակահատվածում մատուցված ծառայությունների գծով հատուցվող արժեքի մասով վճարային հաշիվ, որին կցվում է ցուցակ հետևյալ վավերապայմաններով՝

- ապահովագրական ընկերության կողմից տրված ուղեգրի համարը,
- ԲԿ դիմելու ամսաթիվ,
- ապահովադիր կազմակերպության անվանում ,
- ապահովագրված անձի անուն ազգանուն,
- պայմանագրի համար,
- կատարված բուժում / հետազոտություն,
- ընդհանուր գումար,
- հատուցման ենթակա գումար:

Համաձայն <<Հարկերի մասին >> ՀՀ օրենքի 15.1 հոդվածի՝ 2016 թվականի հունվարի 1-ից սկսած՝ հաշվարկային փաստաթղթերը (բացառությամբ հսկիչ-դրամարկղային մեքենաների կտրոնների և ապրանքների արտահանման դեպքում դուրս գրվող հաշվարկային փաստաթղթերի) դուրս են գրվում բացառապես էլեկտրոնային եղանակով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Մեր կարծիքով ապահովագրված անձանց բժշկական ծառայություններ մատուցող կազմակերպությունը ապահովագրական ընկերությանը չպետք է դուրս գրի հաշվարկային փաստաթուղթ, քանի որ ապահովագրական ընկերությունը հանդես է գալիս միայն որպես վճարող, իսկ ծառայությունը մատուցվում է ֆիզիկական անձանց:

Խնդրում ենք պարզաբանել՝ արդյոք <<Հարկերի մասին>> ՀՀ օրենքի 15.1 հոդվածի հաշվարկային փաստաթղթերը բացառապես էլեկտրոնային եղանակով դուրս գրման դրույթը վերաբերվում է նաև ապահովագրված անձանց մատուցված ծառայությունների մասով ապահովագրական ընկերությանը ներկայացված գումարի հատուցման պահանջով վճարային հաշվին, թե՛ ոչ: